# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սևան բնակավայր 09.01.2026 թ.

2026 թվականի հունվարի 9-ին՝ ժամը 12:00-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Սևան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Սևան բնակավայրում երկհարկանի դիահերձարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Սևանի համայնքապետարանի ներկայացուցիչ Արմենուհի Ղուկասյանը և խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով, նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունության տեսակ, ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, կազմել է բնապահպանական կառավարման պլան և մշտադիտարկումների ծրագիր, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Նշեց նաև, որ օրենքով սահմանված կարգով իրականացվել է ծանուցում, որը հրապարակվել է «Առավոտ» օրաթերթում, ինչպես նաև ծանուցումն ուղարկվել է համայնքին՝ բնակչության և շահագրգիռ հանրության շրջանում իրազեկում իրականացնելու նպատակով: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախաձեռնողի ներկայացուցիչ Արայիկ Ծատուրյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, նշեց, որ որպես կառուցապատում նշված գործունեությունը փորձաքննության ենթակա չէ, քանի որ չի գերազանցում օրենքով

սահմանված 1500 մ² մակերեսը: Փորձաքննությունն իրականացվում է կոնկրետ գործունեության հետ կապված: Նա ներկայացրեց դիահերձարանի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի որակի, թափոնների հետ կապված: Նշեց, որ հիմնական ազդեցությունները նախատեսվում են բժշկական թափոնների հետ կապված, որոնք հեռացվելու և վնասազերծվելու են «Էկոլոգիա ՎՀԿ»-ի հետ կնքված պայմանագրի համաձայն: Ներկայացրեց դիահերձարանի կառուցման անհրաժեշտությունը և կարևորությունը ամբողջ մարզի համար:

Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչ Դավիթ Զանգեզուրյանը հարցրեց դիահերձարանի և հարակից շինությունների միջև թույլատրելի հեռավորությունների մասին: Հարցին ի պատասխան Ծատուրյանը նշեց, որ անհրաժեշտ հեռավորությունները պահպանված են համաձայն ՀՀՇՆ 31-03.07-2024 «Առողջապահական կազմակերպություններ. հիվանդանոցային բուժօգնության (ստացիոնար) օբյեկտների շենքեր և շինություններ» շինարարական նորմերի: Ըստ նշված նորմի ախտաբանանատոմիական մասնաշենքերը իր ծիսակատարությունների գոտով նախատեսվում է հիվանդասենյակների, բնակելի և հասարակական շենքերի պատուհանների տեսարաններից առնվազն 30 մ հեռավորության վրա: Տվյալ դեպքում ծիսակատարությունների գոտին բացակայում է, միայն դիահերձարանի շենքն է: Ծատուրյանը նշեց, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է հարակից՝ հոգեկան առողջության կենտրոնի հիվանդասենյակի պատուհանից 200 մ հեռավորության վրա: Նա նաև ներկաներին ցուցադրեց քարտեզ, որտեղ նշված էին բոլոր շենք-շինություններից հեռավորությունները: Մոտակա շինությունից տարածքը գտնվում է 70 մետր հեռավորության վրա:

Քաղաքացի Կարապետ Մովսիսյանը նշեց, որ դեմ է դիահերձարանի կառուցմանը, քանի որ այն գտնվում է իր հողամասի հարևանությամբ և հետագայում կառուցապատում իրականացնելիս այն կարող է խոչընդոտ հանդիսանալ: Նա նշեց, որ իր հողամասին մոտ չի կարող կառուցվել դիահերձարան: Դատաբժշկական փորձագետ Սահակ Ավետիսյանը նշեց, որ քաղաքացին նախկինում տարածքում ունեցել է սգո ծառայություններ մատուցող սրահ, որը հարևանությամբ գտնվող Սևանի հոգեկան առողջության կենտրոնի բողոքով փակվել է, քանի որ չի համապատասխանել գործող նորմերին: Բացի այդ, դիահերձարանի տարածքը պարսպապատված է լինելու և ելումուտը լինելու է շտապօգնության մեքենաներով: Քաղաքացին նշեց, որ ինքը նախատեսում է կառուցել շինություններ, ինչը խոչընդոտվում է: Ծատուրյանը նշեց, որ ոչ մի նորմ չի խախտվում և քաղաքացու նշած ռիսկերը կարող են առաջանալ լինել նաև հոգեկան առողջության կենտրոնի հետ կապված: Հարությունյանն առաջարկեց քաղաքացի Մովսիսյանին իր մտահոգությունների և առաջարկությունների վերաբերյալ գրավոր ներկայացնել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական

կենտրոն» ՊՈԱԿ-ին և դրանք անպայման կդիտարկվեն փորձաքննության գործընթացում և հիմնավոր լինելու դեպքում հաշվի կառնվեն:

Հարությունյանը հետաքրքրվեց շինարարության փուլում կոյուղու և կեղտաջրերի հեռացման վերաբերյալ, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչը նշեց, որ կեղտաջրերը հեռացվելու են տարածքում առկա կոյուղու միջոցով՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի համաձայն:

Հարությունյանը հարցրեց նաև կանաչապատման մակերեսի վերաբերյալ, ինչին ի պատասխան Ծատուրյանը նշեց, որ նախատեսվում է գծային կանաչապատում՝ մոտ 45 գծմ:

Ք. Հարությունյանն ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, Գեղարքունիքի մարզպետարանի, Սևան համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**Ներկայացուցիչ՝** **Ա. Ծատուրյան**